ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք, ՀՀ,
Արմավիրի մարզ, գ. Այգեկ, Հեռ. (0231)65760 , aygek.armavir@mta.gov.am

N 159
30 հոկտեմբեր 2017թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ-08 հերթական նիստի որոշումները:
Առդիր՝ 16 թերթ:

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ-08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ-08 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 23-ի N34-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ-08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ՝ ԱՌ 01.10.2017 ԹՎԱԿԱՆԸ
36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
38. <<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ՝ ԱՌ 01.10.2017 ԹՎԱԿԱՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի առաջին մասով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ բյուջեի կատարման ընթացքի մասին՝ առ 01.10.2017 թվականը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 23-ի N35-Ա որոշման

ԵՌԱՄՍՅԱ ՀԱՂՈՐԴՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ

2017 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտներն առ 01.10.2017թ. դրությամբ 8403,8 հազար դրամ է, որը հաշվետու ժամանակաշրջանի համար կազմում է 90,5%:

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

հազար դրամ

	Եկամուտների տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	հողի հարկ	1860,8	1250,0	1345,0	107,6
2	գույքահարկ շենք, շինությունների	4870,0	3280,0	2220,0	67,7
3	տեղական տուրքեր	246,0	204,5	204,5	100,0
4	վարձակալական վճար	428,3	323,3	315,0	97,4
5	տեղական վճար	5532,0	4230,0	4222,0	102,2
6	դոտացիա	25318,9	18989,2	18989,2	100,0
7	տարեսկզբի ազատ մնացորդ	2374,5	2374,5	2374,5	100,0
8	հողի օտարումից մուտքեր	23944,7	2374,5	2374,5	100,0
ԸՆԴԱՄԵՆԸ		**64575,2**	**54596,2**	**53715,2**	**98,4**

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ

	Ծախսերի տեսակները	Տարեկան պլան	Հաշվետու ժամանակաշրջան		
			Հաշվարկային պլան	Փաստացի	Տոկոս
1	կառավարման ապարատ	14590,5	11925,5	10526,7	88,3
2	համայնքային այլ ծառայություն	2355,0	2280,0	2019,0	88,5
3	նախադպրոցական կրթություն	15700,0	10700,0	10500,0	98,1
4	մշակույթ, սպորտ, կրոն	2884,0	2484,0	2480,0	99,8
5	աղբահանություն	1500,0	1110,0	1110,0	100,0
6	սոց. ծրագրեր	265,0	265,0	265,0	100,0
7	փողոցների լուսավորում	3026,0	1700,0	1655,0	97,4
8	ճանապարհների կապ.նորոգում	23064,7	23064,7	3581,9	15,5
9	պահուստային ֆոնդ	200,0			
ԸՆԴԱՄԵՆԸ		**64575,2**	**54519,2**	**33128,4**	**60,8**

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _____ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 36-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ, 19-րդ, 20-րդ կետերով,հիմք ընդունելով Արմավիրի մարզպետարանի 2017 թվականի օգոստոսի 3-ի թիվ 01/03.2/3220-17 և 2017 թվականի օգոստոսի 25-ի թիվ 01/04/3529-17 գրությունները, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի իրավաբանական անձանց աղբահանության դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 23-ի N36-Ն որոշման

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

Գործառույթային նշանակությունը	դրամ/1 քմ
Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ	25
Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ	5
Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ	3

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 37-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 14-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի 23-ի N37-Ն որոշման

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի

նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քառասուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար մեկ դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար հինգ հարյուր մեկ դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար հինգ հարյուր մեկ դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ վաթսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.

11) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ մեկ միլիոն հարյուր քսանհինգ հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

2. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մինչև 120 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ հինգ հազար դրամ, 120-250 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ տասը հազար դրամ, մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ տասը հազար դրամ, 200-500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ քսան հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մինչև 120 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ հինգ հազար դրամ, 120-250 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ տասը հազար դրամ, մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ տասը հազար դրամ, 200-500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ քսան հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մինչև 120 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ հինգ հազար դրամ, 120-250 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող բնակելի տան համար՝ տասը հազար դրամ, մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ տասը հազար դրամ, 200-500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական նշանակության շինության համար՝ քսան հազար դրամ.

4) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

5) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա. կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառման անձանց քանակի՝ համայնքի անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական հիսուն դրամ,

բ. իրավաբանական անձանց համար՝

- առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 1 քառակուսի մետրի համար՝ քսանհինգ դրամ,

- արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 1 քառակուսի մետրի համար՝ հինգ դրամ,

- կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ՝ 1 քառակուսի մետրի համար՝ երեք դրամ:

6) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ յոթ հազար դրամ՝ յուրաքանչյուր երեխայի համար: Տեղական վճարից ազատել՝ երկկողմանի ծնողազուրկ երեխաներին՝ 100%-ով, միակողմանի ծնողազուրկ երեխաներին՝ 50%-ով.

7) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ փոխհատուցման վճար:

ԱՅԳԵԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N37-Ն ՈՐՈՇՄԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> N37-Ն որոշման ընդունումը պայմանավորված է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-14-րդ հոդվածների պահանջներով:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ _____ ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38-Ա

<<ՀԱՅԱՍՏԱՆ>> ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետարանի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 01/07.1/4153-17 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. <<Հայաստան>> համահայկական հիմնադրամին ցուցաբերել ֆինանսական աջակցություն՝ Այգեկ համայնքի 2017 թվականի բյուջեից փոխանցելով 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 39-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական կատերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին, հինգերորդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին>> N45-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Բյուջեի վարչական մասով՝

   1.1) Պահուստային ֆոնդի 200,0 հազար դրամն ուղղել հետևյալ ծախսերի կատարմանը՝

   ա. Կառավարման ապարատի՝ 01.1.1 բաժնի 4111 հոդվածին 120,0 հազար դրամ:

   բ. Փողոցների լուսավորություն՝ 06.4.1 բաժնի 4239 հոդվածին 60,0 հազար դրամ:

   գ. Սոցիալական ծրագրեր՝ 10.7.1 բաժնի 4729 հոդվածին 20,0 հազար դրամ:

   1.2) Կառավարման ապարատի՝ 01.1.1 բաժնի 4269 հոդվածի 50,0 հազար դրամն ուղղել փողոցների լուսավորություն՝ 06.4.1 բաժնի 4239 հոդվածին:

   2) Բյուջեի ֆոնդային մասով՝

   2.1) Ճանապարհային տրանսպորտ՝ 04.5.1 բաժնի 5112 հոդվածի 6800,0 հազար դրամն ուղղել 5113 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՆՈՐԻԿ
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՐԱՍԻՄ
4. ՄՈՎՍԵՍՅԱՆ ՋԱՐՋԱՆԴ
5. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԱՄ

Համայնքի ղեկավար՝ **ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N39-Ն որոշման ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի առաջին, հինգերորդ մասերի պահանջներով՝ բյուջեի լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությունից ելնելով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N45-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Այգեկ համայնքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ _____ *ՄԱՅԻՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ*